

ՊԱՏԿԵՐ

ՀԱՆԴԵՍ ԿԻՍԱՄՍԵԱՅ

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ, ԹԻԻ 4

1 Յոնիս 1891



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈՒԹՅՈՒՆ

Տ Պ Ա Ր Ա Ն

Ճ Ի Վ Է Լ Է Կ Ե Ա Ն

1891

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1. ԳՐՉԱԳԻՐ ՆԱՄԱԿԱՆԻ ՆԱԽՆԵՍՑ Թուրք յԱկաղայ
Եպիսկոպոսէ ի Հայս , և. Պատասխանի Տեառն Սա-
հակայ բոբոյն Ակաղայ:—Հրատ. Հ. Բարսեղ Չարսեան:
2. ՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸ ԲԸՆԱՆԻ ՎՐԱՅ (Շարայարեյի).—
Յարսեղիան Ունճեան:
3. ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿՇԻՌԻՔ 1891 ՏԱՐԻՈՅ. — ԱՆ-
ՏՈՆ ԹՕՓՃԵԱՆ:
4. ՄԱՐՄՆԱՄԱՐՉ Ի ՊԵՏԱ ԱՄԵՆԵՑՈՒՆ (Շարայարե-
յի) .— Յ.Վ. Վ. Աճեֆեան:

Պ Ա Տ Կ Ե Ր

Հ Ա Ն Դ Է Ս Կ Ի Ս Ա Մ Ս Ե Ա Յ

Երկրորդ Տարի

ԹԻՒ 4

1 Յունիս 1891

ԳՐԶԱԳԻՐ ՆԱՄԱԿԱՆԻ ՆԱԲՆԵԱՅ

Թ Ո Ի Ղ Թ

ՅՄԱԿԱԿԱՅ Ե ՊԻՍԿՈՊՈՍԷ

Ի Հ Ա Յ Ս

Պատուաւրան եւ առաքիւնի Մշափա-
նիք Հայոց սիրելիք եւ ծառայք Քր-
րիստոսի, մեծամեծք եւ փոքունք,
յԱկակաց Եպիսկոպոսէ Մելիսեօնոյ, ՚ի
կրտսեր ծառայէ իտնապիկոշքեաւրք եւ
սիրով ողջոյն:

Վասն զիմադարձացն ճշմարտութեան որ զկնի զնացին ամ-
բարչտութեանն Նևտորի եւ Թէոդորի, եւ ոչ հեղգացան զո-
վիչք ինել ամբարչտութեան նոցա, եւ մինչ ի սահմանս ձեր
փութացան առաքել զթունաւոր եւ զապականիչ վարդապետու-
թիւնն, անմարիթ եւ անկարգ համարեցաք լուել որք ունին ըզ-
ճշմարիտ վարդապետութեան քարոզութիւն . եւ եթէ յայսպիսի

ժամանակի ոչ ճգնեսցուք ցուցանել ձեզ՝ որոյ ընկալեալ զճրշմարիտ հաւատոյն քարոզութիւն , աւգնել անձանց անմեղաց եւ յատկամիտ մարդկան , զի մի՛ լիատեսցին ի խարդախամտայն եւ ի նենգաւոր մշակայն , արժանի եւ իրաւ համարեցար զրեւ առ ձեր ատուածատիրութիւնդ , զի տացէ ձեզ չընորհիւն Աստուծոյ եթէ սուրբ եւ ճշմարիտ վարդապետքն ձեր հաստատուն եւ անշարժ կան ի վերայ հիման ճշմարիտ հաւատոյ , եւ ոչ տան տեղի յափշտակող գայլոյն , ունել ժամանակ գողանալ զոր ի հաւտէ Քրիստոսի . զի արդ լցեալ է ժամանակն զոր յառաջագոյն ասաց երանելին Պաւղոս , եթէ զիտեմք զի եկեսցեն առ ձեզ գայլք յափշտակողք , որք ոչ խնայիցեն ի հաւան Տեառն . զի եւ ի ձէնջ յարիցեն որ խաւսիցին անարժանս , ձգել զոմանս յաշակերտելոյն զինի իւրեանց : Արդ կատարեցաւ եւ այն մարդարէութիւնն որ ասէր . զարձեալ ասէ թէ Գալոց է նախ սպոտամբութիւնն , եւ ապա յայնմեցի որդին կորստեան . մարդն անաւրէնութեան , հակառակորդն հրպարտացեալ ի վերայ ամենայնի , որ առի ատուած կամ պաշտաւն , ի գալ մտանել նմա ի տաճարն Աստուծոյ եւ նստել որպէս ատուած , եւ ցուցանել զանձն իւր թէ ատուած իցէ :

Ահա ժամանակ սպոտամբութեան . ահա ժամանակ զայլոց , ահա ժամանակ որ խաւսիցին խոտորնակս . արդ աղաչեմք զսէր ձեր , մի՛ խարեցնեն զձեզ բանք մնտիր . մի՛ նայիք ընդ պատուականս պատուականութեան մարդկան , եւ մի՛ ընդ բազմութիւն որ միարանիցին լինել ընդդէմ իւրեանց կենարարն Քրիստոսի եւ ճշմարիտ հաւատոյ , զի պարտ է կատարել ասացելոց բանին Տեառն՝ որ ասէ , Թ՛ւ եկեսցէ որդի մարդոց գտանկցէ՞ արդեաւք հաւատոս յերկրի : Զի բազմութիւն որ ի չարիս եւ յամբարշտութիւնս միաբանին , չէ պարտ պտուոց արժանի համարել քան զճշմարտութիւն , այլ զիտեւ պարտեմք զի ժամանակս փորձութեան է եւ սպոտամբութեան , ձգել զբազումս յամբարշտութիւն . այլ երկիւղածաց Աստուծոյ պարտ է պահել զկրանս հարցն եւ զուսումն ՅժԻիցն Եպիսկոպոսաց սրբոց զհատատութիւնն՝ որք մեծաւ ճշմարտութեամբ եւ խորհրդիւ , եւ հրամանաւ Սրբոց Հոգւոյն առաքելութեան , եւ աւետարանութեան վարդապետութեամբ ուսուցին մեզ հաւատ , զոր ասեմք հանապազ ի սուրբ եկեղեցիս . բոտ այնմ հաւատոյ սուրբ եկեղեցիք զաւանակայն մկրտեն մինչ ի ժամանակս անաւրէն նետորի եւ չլիչլի անուանն Թէոդորի վարդապետութեանն՝

զոր ամպարիչսն Նեստորիոս յայտնեաց . եւ բազումք զնային զինի նոցա ամպարչտութեանն , սակայն զուսումն ճշմարտութեան յերկուս ցուցանել ոչ կարացին ի սինհոդոսին եւ ի ժողովն որ եղին յԵփեսոս Մ . եւ թէ սակաւ կամ աւելի կամ պակաս որք ժողովեցան սուրբ եպիսկոպոսքն յամենայն տիեզերաց . եւ եկին միաբանութեամբ բայց յԱնտիոքացւոյն . զնոյն ուսումն հաստատեցին որք զայցեն ի հաւատս եւ ի մկրտութիւն . եթէ որ արտաքս քան զայն ուսուցանիցէ , եւ երկուս որդիս քարոզիցէ , մի որ ի Մարիամայ , եւ միւս որ յԱստուծոյ Բան , կամ չրջկի եւ այլայլելի ոք ասիցէ զԱստուած ի մարմնանալն , նըզովեացի , որ ոք եւ իցէ , զի ոչ մեք նդովեմք զայնպիսին , այլ սուրբն Պաւղոս ասէ , եթէ ես կամ հրեշտակ յերկնից աւետարանեցէ ձեզ աւելի քան զոր ընկալաքն՝ նդովեալ լիցի : Եւ մեք Երրորդութիւն ընկալաք , եւ զիսաչեալն ի սուրբ Երրորդութեանն զիսեմք , եւ մահուամբն նորա մկրտիմք , որպէս եւ ասաց . «Մկրտեցէք զնոսս յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հօգւոյն Սրբոյ . » ոչ ասաց որդւոց՝ այլ որդւոյ . եւ երանելին Պաւղոս թարգմանեաց թէ զի՛նչ է անուամբ որդւոյ մկրտել , Որ միանգամ , ասէ , մկրտեցաք Քրիստոսիւ Յիսուսիւ , մահուամբ նորա մկրտեցաք . թէ ի թշնամութեան մերում գժտեցաք ընդ Աստուծոյ , մահուամբ որդւոյ նորա . . . աղաչեմք մի՛ ոք զձեզ խաբեցէ . մի՛ պատուականութիւն երեսաց , մի՛ բազմութիւն . մի՛ թողացուցուք զճշմարիտ հարցն կրանս եւ զհաւատ որով հաւատացայքն , որով ապրեցայքն : Զայս հարկեցայքդրել առ սէր ձեր , զի ի դալ առ մեզ սիրելեաց մերոց երեցանց , Հոնայ , Քոթայ , Անձնայ , պատմել մեզ զբարի գործնս զոր գործեցէք , զի զզրեալն թիոգորի կասկեցէք կնքեցէք : Արդ մի՛ ոք հաւանեցուցէ զձեզ առ անդրէն զայնտիկ որք փութով եւ ատորմելով ստանան զայն ի կործանումն ստացաւդաց եւ նորա լրաւդաց . զի եթէ Նեստորիոս վերացաւ յամենայն եկեղեցեաց , զիմրոջ թիոգորն զիրքն եւ ղիսումն ընդունելի իցէ , որք զնոյն միտս եւ միասակարութիւն ունին : Զայնպիսին գիտասջիք , զի են նոքա սուտ մարդարէք , մշակք նենդաւորք կերպարանեալ կերպարանաւք պաշտանէից Քրիստոսի : Յայնպիսեացն զգուշասջիք , եւ նդովեալս համարեոջիք : Եւ մի՛ ընդունիցիք զսուտ համբաւս նոցա , զոր բերեն առ ձեզ ի կողմանցն արեւելեայց : Այլ ես , թէպէտ խոնարհ եւ գժուձ եմ քան զամենայն մարդիկ , սակայն վասն փրկութեան ձերոյ հոգալ ոչ դատարեմ : Եւ ես երկնչիմ՝ զուցէ

զոր շարժիցէ ի ձէնջ պատրանք մոլորութեանն՝ եղի զայս վը-
կայութիւն առաջի Աստուծոյ եւ Յիսուսի Քրիստոսի եւ Սրբոյ
Հոգւոյն եւ ընտրելոց հրեշտակաց :

Արդ ձեր է զիտել, զի ո՛չ ունի պատճառ յաւուրն յայնմ,
որ երթայցէն զկնի մոլորութեանն : Այլ դուք զգուշացարուք
անձանց եւ ընկերաց ապրիլ ի մոլորութենէ : եւ ի պատրանաց
վրիպելոցն՝ լինել պատճառք կենաց եւ առաջնորդք ժառանգու-
թեան գոյոյն Արբանամու եւ ընակիչք արքայութեանն երկնից :
Ողջ լերուք Տերամբ ամենայն սիրելիք նորա սուրբ ծառայք
Քրիստոսի :

*
**

ՊԱՏԱՍԽԱՆԻ

Տ Ե Ս Ռ Ն Ս Ա Հ Ա Կ Ա Յ

ԹՂԹՈՅՆ ԱԿԱԿԱՅ

→→→@@←←←

Առ ձշմարիտ եւ աստուածասէր տեր
մեր եւ հայր, սուրբ եպիսկոպոս **Ա**րսի,
ի **Ս**ահակաց ի **Տ**եր ողջոյն :

Ճառագայթք մշտնջենաւոր յաւիտեանսն լուսոյք, որ առ
մեր տկարութիւնս երեւեցաւ ի ձեր լուսաբեր սրբութենէդ,
յոյժ ի ծագելն իւրեանց զաւրացուցին զմեր տկարութիւնս,
եւ զնուազ խորհուրդս մեր անեցուցին . զոր աւրինակ տապ
ինչ ջերմագին յանխառն աւրոյ հասեալ ի բոյսս արոտաց, եւ
զկնի նորա ցաւդ քաղցրութեան հասեալ՝ փութով յառողջու-
թիւն զարձուցանէ, այնպէս զեղեցիկ իմն ցանկալի եւ աւետ-
իւք ինդրելի էր մեզ լսել զերանելի պատգամս ի ձէնջ առ մեզ
հասեալ : Մեր աղաւթք հանապազորդ էին արժանի լինիլ յամե-
նայնի ընդունել եւ վայելիլ յաւրճութիւնսդ հոգևորս ձերոյ

մեծաւքանչ սրբութեանդ, զի քաղցրացեալ էր մեզ կալ մնալ առ-
տէն ի սմին յսրբանացեալ տգիտութեան իբրև ի բերդ ինչ ա-
մուր փախտեաց անկեալ յանդիտութեանս . արդ պահպանու-
թիւնս զմեք առեալ զաւղնականութիւնս աղաւթից ձերոց , պա-
հել զհաւատսն ճշմարտութեան որ ի ձեր ի սուրբ վարդապե-
տութիւնէդ ունէաք եւ անաղտոր լեալ տգիտութիւնս եւ պարզ-
մտութիւնս մեր մանաւանդ ի նորարան հրէութեանցն զոր այ-
լանդակքն տակաւին զբոյսս զանութեանս եւ աղտեղութեանս
սերմանեացն ցուցին եւ ցանկեցին ի վերայ սուրբ սերման զու-
րոմնախառն ուսմունս , որ ի հանճարափնսս սատանայէ խառ-
նման ուսեալ սովորեալ են : Արդ որովհետև մողարն առաջին զըլ-
խաւորաւքն չափ զվեր ժանդաղտեղութիւնն սերմանել ժպրհե-
ցաւ , զայց մերոց մեղացն գործ համարեցաք եւ յոյժ ձերում
թիղթոյդ սրտմակից եղեալ ողբացաք , եւ ընդ բնաւ տեղիս մե-
րոյ նահանդիս մեծաւ պատուհասողից պտտուիրանաւ արձակե-
ցաք՝ մի՛ լինել ամենեւին աջակիսի բարբարոսացն՝ մի՛ ընդունել
զչար հերետիկութեանն բարբանջանս : Բայց ես զարմացեալ եմ
ընդ այնտիկ որ աւելի քան զաւրինացն չափն ջանան եւ նկր-
տին ըմբռնել զանըմբռնելին . այլ կարծեմք զայնպիսեացն չզի-
տել ամենեւին զգիրս եւ զղաւրութիւնս նորին . բայց եթէ հը-
րէարէն միայն զմուրն նկատիցեն եւ իբրև գողացեալ իմն հա-
մարիմք զմիտս նոցա ի թշնամոցն եւ փոտացեալ ի չար հի-
ւանդութեան . արբեալ ի թանճար արբեցութիւնէ . եւ զգայու-
թիւնս ճաշակացն թարշամեցուցեալ չկարէ առնուլ զհամ գի-
նոցն . ի սատիկ կիզմանէ ընկզմին միտքն ի թմրիրն խեղդա-
րութեանէ , թէ զոր սարապարտ գիտութիւնս բազում ուսմանն ի
սատանայութիւնս զառածէ , որ հասանել անհաս չափոցն ժպրհին,
քանզի ո՛չ զոյ այլ գիտութիւն խաւարայեղց , քան երկուս որ-
զիս կամ երկուս տեսարս անուանել ի Քրիստոս , աներկիւղա-
բար անամաւթաբար զլրջութիւնն իւրեանց յայտնապէս պատ-
մնն . այլ զի խցցին անամաւթ բերանք , եւ անաւրէնութեամբ
սրեալ լեղուքն , ճշմարիտ մարմնացաւ Բաննս առ ի նորոգել
միւսանդամ մարմնով չնչով եւ ոգւով զմարդն հնացեալ զտպա-
կանեալն ի մերայց . եւ զի ի փայտէ գայթակղութիւնս եղև եւ
մահ , փայտ կենաց սու փայտն կանգնեաց , եւ ծառ առ ծառն
բարձրացոյց պտուղ կենդանարար փոխանակ այնր մահածին
պտղոցն պարգևէր . ինքն զինքն եղ . եւ ինքն զինքն անդրէն
յանձն իւր ընկալաւ զսուրբ մարմինն եւ զպատուական արիւնն ,

պաշար կինաց մեղ հաւատացելոցս յաշտիճանաւոր ճանապարհն պատրաստեաց: Եւ արդ որ միանգամ յայն ի ճանապարհէ եւ յուղիղ հաւատոյն վրիպեցան , հուր գեհննին պատրաստեալ պահի նոցա . եւ մեք աստ եթէ յանկարծ յայնպիսեացն գրոցուք, ո՛չ միայն չընդունիմք կամ հալածականս առնեմք , այլ եւ ընդ մեծ պատժովք արկանել ո՛չ զանդադիմք:

Ո՞րչափ եւս պարտ է ձեզ որ ի մեծամեծ իշխանութեանդ վայելէք նախանձել զնախանձն Աստուծոյ, եւ մարմնով եւ հոգւով ջանալ բառնալ ի միջոյ զխոչդ եկեղեցւոյ Քրիստոսի , մանաւանդ զի թագաւոր ունիք , որ զհոգ Աստուծոյ յանձինս իւրեանց բարձեալ բերիցեն կարող են զխոչդ ի միջոյ խել , եւ զբոյս սուրբ սերմանց հաւատոցն պարարտացեալ արմտեացն քաղցրութեամբ զանկեալ հասկն սերմանաւորաց նմա մատուցեէ ատորացեալ բազմապատիկ զբերրի պտուղն հատուցէ, եւ ուրախ արասցէ գտէրն արդիւնարտաց, եւ զմշակն առատապէս պարգեւաց արժանի արասցէ . զի թէ որ երկրաւոր թաղաւորաց սպասուորք իցեն , եւ գուղնաքեաց ինչ բանք մանաւանդ որ վասն ծիրանեաց լինին ո՛չ յանձն առնուն զատարկ անցուցանել, եթէ ո՛չ մեծապէս պատուհասիւ զվրէժն խնդրիցեն . որչափ եւս պարտ է որ զանեղձ եւ զանարատ հաւատն յապականութիւն դարձուցանեն, եւ յանհասն հասանել ժպրհին եւ մշտնջենաւոր լուսոյն գեր ի վերայ լինել յաւժարեն , զանքնին Երրորդութեանն քննութիւն ջանսն ընդ խնդիր արկանել, պարտ եւ պատշաճ է առաւել եւս նոցա ընդունել պատիժս պատուհասի . քանզի սրբութիւն Երրորդութեանն անմատոյց հրեշտակաց եւ աներեւոյթ քրովբէից, եւ սրովբէից լոկով միայն փառաւորութեամբ եւ սորհնութեամբ միայն պաշտի :

Արդ տէր մեր եւ հայր յընդունելի եւ ի սուրբ աղաւթս քո յիշել անգարչ լինիջիր . եւ եթէ ինչ ըստ չսփոյ թղթոյդ առ տգիտութեանս վրիպեալ իցէ՝ ուղղել կամեսջիր եւ զտկարութիւնս զաւրացուցանել մի՛ զանդադեցիս . այլ յազանդոցն՝ որ գրեցեր զատչել առ ժամանակս ի շնորհս Աստուծոյ այսպիսի ինչ չեւ է հասեալ , ապա եթէ իցէ ինչ ծածկեալ ի ժանդոյ անտի , ի հարկէ ջան լիցի խել զխոջն ի միջոյ , զի միաբանութեամբ փառաւորեսցուք զՔրիստոս :

Հրատ. Հ. Բարսեղ Զօբոյեան

Տ Ե Ս Ո Ւ Թ Ի Ի Ն Մ Ը

ՌԸՆԱՆԻ ՎՐԱՅ

Օրուան մարդն է Ռընան . թէ՛ զրական եւ զիտական հանդէսներն եւ թէ՛ օրական թերթերն զարձեալ Ռընանով կը զբաղին : Այն տողն որ կ'ենէ իւր զրչէն , մեծ փոփոխութիւն մը կը գործէ կարծես յընթերցողն . ընդարձակ զխտութիւն , մինչեւ ցնորութիւն մշակեալ իմացականութիւն , զանազանութիւնն եւ մեծութիւնն ինչորոց , յորս կը դեղերի իւր միտքը , այն խորհրդաւոր հրապոյցն զոր կը սիրէ բոլոր իւր գաղափարաց վրայ , շնորհիւ նուրբ ոճոյն ազդեցութեան , յամենայնի , մինչեւ իսկ իւր գրութեան եղանակին մէջ , հոգեոյ բարձրութեան անվերջանալի ձեւացում մը եւ մտաւորական տեսակ մ'աշխուսապետութիւն , ահա՛ ինչ որ կ'ապահովէ իւր երկերուն ամենայատուկ սպաւորութիւնն ընթերցողաց մեծ մասին վրայ , զոր կը հրապուրէ եւ կը զրդռէ : Ի մի բան՝ այն գաղտնիքն որ կը կազմեն զրական մոգութիւնը՝ Ռընան զայնս ունի եւ ի կիր կ'առնու : Ըսենք ուրեմն Գարօի հետ, թէ՛ նա ճշմարտապէս հոգւոյ խոփէլ (charmeur d'ames) մ'է :

Ժօղէֆ-Էյնէսթ-Ռընան ծնած է ի Թրեկիէ (Գօթ-տիւ-Նօր) 27 Փետրուար 1823ին, եւ 13 Յունիս 1878ին ընտրուած է անգամ Յրանտական կաճառին : Իւր զլխաւոր գրութիւնը հետեւեալներն են :

Ընդհանուր պատմութիւն եւ համեմատական դրութիւնք սեմական լեզուաց, (Histoire générale et systèmes comparés des langues sémitiques) գործ բազմալատակ եւ հետաքնին, ուրով լեզուաբանական մի մրցման մէջ արժանացաւ Վօլնէյի մրցանակին (prix Volney). Երկու տարի վերջը գրեց Ուսումն ի Միջին դարու Յոյն լեզուի , (Etude de la langue Grecque au moyen âge) — այնքան շահաւէտ հեղինակութիւն մ'որ խոկոյն պրակուեցաւ Ակադեմիայի կողմանէ : 1849ին՝ Արձանագրութեանց եւ Գեղեցիկ Գպրութեանց Ակադեմիան զրական պաշտօնով մը Իտալիա զրկեց զինքը, ուրկէ ի դարձին ի միասին բերաւ կարեւոր երկի մը նիւթերն ի վերայ արարական փիլիսոփայութեան, զոր յետոյ ի լոյս տուաւ հետեւեալ վերնադրով-Աւերրօէս եւ Աւերրօիսմութիւն (Averroës et l'averroïsme), Պատմութիւն ծագման Քրիստոնէութեան (Histoire des origines

du Christianisme), զոր պէտք է նկատել իբր նախաշաւիղ Վարժ
Յիսուսի (Vie de Jésus) գրքին, եւ յաջորդաբար հրատարակեց
Առաքեալք (Les Apôtres), Ս. Պօղոս եւ իւր առաքելութիւնք (St
Paul et sa mission). Դերաքրիստոս (L'Anti-Christ). Քրիստո-
նէական Եկեղեցի (L'Eglise Chrétienne) : 1880ին Լոնտրայի մէջ
քրիստոնէութեան վրայ կարգ մը բանաստեղծութիւններ ըրաւ,
զորս յետոյ մամուլ տուաւ : Յիշատակութեան արժանի են Փի-
լիսոփայական արամաստեղծութիւնք (Dialogues philosophiques)
եւ Քալիպան (Caliban), Մրրիկ (Tempête) շարունակութիւնն,
որ Շէյքսպիրի կախարդական թատերգութիւնէն չնչուած տե-
սակ մը քնարերգական եւ իմաստասիրական քննարկն ուսագ
(fantaisie) մ'է : եւ ասոնցմէ զատ իբր արուելագէտ ֆրանսա-
կան մատենագրութիւնն Ռընանի կը պարտի Յոֆայ Գրոյ եւ Երէ
Երէջին արձակ եւ զաշնակաւոր (rhythmé) կրկին թարգմանու-
թիւններն : Փիւնիկեան երեք արձանագրութիւնք (Trois inscrip-
tions phéniciennes), Փիւնիկի աստեղութիւնք (Mission de
Phénicie). Նոր դիտողութիւնք երբայական վերազարթեան
վրայ (Nouvelles observations d'épigraphie hébraïque), որ
լեզուաբանական լայնածաւալ հմտութեան մը գրուած կը կրնն .
Տեղեկագիր արեւ . գրականութեան զարգացման եւ Արեւելի
վերաբերեալ գրուածոց վրայ (Rapport sur les progrès de la
littérature orientale et sur les ouvrages relatifs à l'Ori-
ent) հետալից, շահալրդիւ եւ պաշտօնական գրութիւն մը, եւնո
Ահաւասիկ մեծ հանճարի մը մեծ արտագրութիւնքը . սա-
կայն առանց խաբուելու այդ վարժ գրչի եւ բեղմնաւորեալ
մտքի հրապոյցներէն, ջանամք ի վեր հանել այն օձն՝ որ մին-
չեւ ցայտօր սկեպտիկանութեան զալարին տակ կը սողոսկի եւ
կը թռնաւորէ անթիւ միամիտ եւ տկար հոգիներ, զոր կը
պաշտեն իբր մի արտասովոր մահկանացու :

Սթրասուի, Պտուրի, Էվարտի եւ իւրեանց աշակերտաց
հիմնած Գիտական աստուածաբանութիւնք (La Théologie scienti-
fique) դարուս կիսէն ի վեր Կրօնական քննադատութեան (la critique
religieuse) մէջ մեծ եւ կատարեալ փոփոխութիւն մը յառաջ
ընթած է, եւ այս մասին իրենց պարզած գաղափարն եւ սկզբունք
անցնելով Հոննուր եւ միանալով մի ընդարձակ եւ խորին հրմ-
տութեան, հմայիչ եւ վեղեցիկ ոճոյ, սիրային մեղամաղձու-
թեան մը, թրթռեցուցիչ բանաստեղծութեան մը՝ յափշտակած
են ու կը յափշտակեն զեռ սրտերը, յուզած են ու կը յուզեն

դեռ մտքերը , վառած են ու կը վառեն դեռ հոգիներն ամեն ա-
նոնց որ միամտաբար գերի եղած են նոցա մոլար վարդապե-
տութեանց :

Այս կրօնական քննադատք կը յարգեն ու կը պատուեն
դժբրխտոնէութիւն, կարծելով թէ պիտի տեւէ աւելի երկար քան
Անտահմանին ուրիշ ամեն ներկայացումներն , եւ թէ անկարելի
է սահմանել ժամանակն, ուր մարդկութեան պարզ մասունք պիտի
կարենան առաջ անցնիլ , քան այդ խորհրդանիշն , որ այնքան
լաւ յարմարցուած է իւրեանց մշակութեան աստիճանին: Մաս-
ամբ մ'ալ նոքա կը համարձակին յարել թէ քրիստոնէութիւնն,
ճշմարիտ, զերջնական, մարդկութեան բարի կրօնն է , վանդի իւր-
եանց քննադատութիւնը մերկացուցած է զայն կրօնական վար-
դապետութիւններէ, եւ սրտի ներշնչմանց թողլով այնմ մի մեծ
ասպարէզ տուած է ըստ քմաց փոխուելու եւ անհատական ա-
մեն պարագայից, քաղաքական ամեն աստիճաններու եւ ապա-
ղային ո՛ր եւ է ընկերային եւ քաղաքային ձեւերու յարմարելու,
եւ այս մտացածին եւ յաւիտենական կրօնքը կը հանգչի լոկ
զգացման վրայ :

Եւ սակայն , հեղուութեան նշանաւոր վարպետն Հայն՝ դա-
տուելով իւր ընկերներէն եւ աւելի յառաջ երթալով արձակ
համարձակ այսպէս կը գոչէ . «Մենք հետամուտ պիտի ըլլանք
« ժողովրդեան երջանկութեան, մենք երբէք ժողովրդեան մարդ-
« կային իրաւանց համար չէ որ պիտի մարտնչինք , այլ միայն
« մարդկութեան աստուածային իրաւանց համար . մենք պիտի
« հիմնենք երկնային աստուածոց ռամկապետութիւն մը՝ հաւա-
« սար երանութեամբ » :

Արդ, Հայնի եւ Սթրաուսի վրայ յանչափս սքանչանալով
հանդերձ՝ Ռընան մերթ յետին աստիճան կը մօտենայ իւր հա-
րազատ հօր Փանթիին , եւ ուրիշ բան չընել, բայց եթէ գեղեցիկ
լեզուաւ մը բացատրել Քննադատութեան զոտ բանի (Critique
de la raison pure) (*) ընդհանուր հետեւանքն , եւ մերթ
Հէկելի դառնալով փոխ կ'առնու մի քանի խորհրդաւոր ձեւա-
կերպեր (formule) :

Բոլոր իւր աստուածաբանական եւ կրօնական գրուածք լի
են դերմանական դաղափարներով , ամենքն ալ գերման կը հո-
տին եւ իւր Հետազօտութիւնք կրօնական պատմութեան վրայ

(*) Քանի՛ ի մասսայային քննադատութեան գլխաւորներէն մէն է :

(Etudes d'histoire religieuse) եւս գուրկ չէ գերմանականութեանէ՝ ըստ որում Ռընանի Աստուածն Գեղեցիկն է : Ռընան նոր տեսակ մը Կրօնափոփոխական հնարած է Կրօնական գուարրակցութիւն (Dilettentisme religieux), եւ ահա՛ իւր սահմանն կը ընկնի նկատմամբ . «La religion est certainement la plus haute et la plus attachante des manifestations de la nature humaine; entre tous les genres de poésie, c'est celui qui atteint le mieux le but essentiel de l'art.»

Կրօնքն բանաստեղծութեան վերածելէ վերջ, Ռընան անվախ կը յառաջանայ եւ այսպէս կը շարունակէ . «Այլարհիս վիճակին մէջ անհնարին եղած եղելութիւնները բացատրելու համար գերբնական միջամտութեան մը զիմեն՝ Ինքնաբերականութեան (spontanéité) թաքուն ոյժերն անզխանալուն ապացոյցն է : Ռ'ընաի թախանցես մարդկային մտայ սկիզբն, այնչափ պիտի հասկնաս թէ՛ ամեն կարգի մէջ՝ հրաշքն ուրիշ բան չէ, բայց էլիքն անբացարբէլի , թէ՛ նախնական մարդկութեան երեւոյթներն արտադրելու համար հարկ տեսնուած չէ իրաց ընթացքին մէջ հանապազ խառնուած Աստուած մը , եւ թէ այս երեւոյթք բանականութեան եւ կատարելութեան պէս անսխալութեամբ օրինաց կանոնաւոր դարձացումն են (*) : »

Այսպէս ահա Ռընան առ տակաւ տակաւ ամուրշտութեան ամնդունին կ'ենէ , եւ բառնալով ի միջոյ կրօնն եւ բնդհանուրէն մասնաւորի անցնելով , Մովսիսի եւ Յիսուսի գարերու պէս յասկացեալ գարերու Ս . Գիրքը յարմար չգտեսր որ խորհուրդք, զպոսեթիք (mythes) կոչուին, այլ նախամեծար կը համարի Ջրոյցք եւ վեպք աւանդականք (légendes et récits légendaires) բառերովն յորջորջել Մովսիսական եւ Քրիստոնէական կրօնից ամեն նասրբազան գրութիւնքը . քանի՛օն խղճամիտ է Ռընան :

Սակայն, մի՛ վրդովիք, յարգոյ ընթերցողք , եւ մի՛ մեղադրէք զՌընան , վասնզի իւր ձեռքը չէ, եւ յանցանքն մտածման ազատականութեանն է , եւ դեռ աւելի՛ բառին բուն նշանակութեամբը սկեպտիկեան մ'է Ռընան , որ միեւնոյն երկին մէջ այսպէս կը յարէ . «Մարդկութիւնն երբէք զխառններէ եւ վիճիւստիաներէ բաղկացեալ չէ , յաճախակի կը խարուի , կամ լաւ եւս ըսելու համար , հարկաւորապէս կը խարուի եղելութեանց եւ անձանց ինկոտոյ վրայ : Բայց չխարուիր բնաւ իւր պոչքա-

(*) Etudes d'histoire religieuse.

ման նիւթն զայս . այն զոր կը պաշտէ մարդկութեանը, իրականապէս պաշտելի է , քանզի այն զոր կը պաշտէ իւր գազափարած (idé-
alisé) հանգամանայ մէջ , Բարութեանն եւ գեղեցիկութեանն է : . .
Ասորոսած Բարն մարդկութեան յարգանաց առարկայն ըլլալով , եւ այս
Բարս գործածուած ըլլալով գեղեցիկ Բանաստեղծութեանց մէջ , զայդ
լքանելն լեզուի մը սովորութիւնները հիմն ի վեր սապակել ըսել
է : Ըսէք պարզմտաց (*) (simples) ապրիլ տենջանօք առ ճշմարի-
տրն , գեղեցիկն ու բարին , այս բառեր իրենց համար եւ ոչ մի
իմաստ ունին : Ըսէք իրենց սիրել զԱստուած եւ չմեղանչել
ընդդէմ Աստուծոյ . սքանչելի իմն պիտի հասկնան ձեր այս խօս-
քերը : Ասորոսած , Նախաինստութեան , Անմահութեան , կարգ մը հը-
նացեալ Լաւ Բարեր , ինչ մը ծանր լեւերս (!) զոր փիլիսոփայութիւ-
նը պիտի մեկնէ առ տակաւ տակաւ նրբացեալ իմաստներով ,
բայց զոր երբէք չպիտի կարողանայ փոխանակել ընդ այլս : Մի
կամ ուրիշ ձեւի տակ , Աստուած պիտի լինի միշտ մեր գեր-
զգալի (suprasensible) պիտոյից բովանդակութիւնն ուրիշ
բացատրութեամբ , մարդս՝ ի տես գեղեցիկ , բարի եւ ճշմարիտ
իրաց , ինքիրմէ զուրս կ'ենէ եւ արբացեալ մի երկնային հրա-
պօրէ , կ'ոչնչացնէ իւր նուաստ անձնաւորութիւնը , կը յափըշ-
տակուի , կ'սքանչանայ : Ի՞նչ է այս , եթէ ոչ պաշտել : (**)

Ըստ այս քրնագրատական դպրոցի , մարդուս Աստուծոյ ամ-
բառնալու համար փորձաստութեան եւ հայեցողութեան ճանա-
պարհներն դոյուած ըլլալով , ինչ կը մնայ ուրեմն ընել իրեն :
—Միակ միջոց , այն զոր բոլոր Բիւթիկեանք (les mystiques)
հետեւած են , զգացումն է , զոր Ռընանն եւս նախամեծար կը
համարի , եւ ահաւասիկ , թիչ մը առաջուան սկեպտիկեանն՝ որ
կը խօսի կատարեալ Բիւթիկեանի մը պէս , հետեւեալ կերպիւ :
« Եթէ մարդկութիւնն լոկ մտաւոր լինէր , անաստուած պիտի
ըլլար . . . : Աստուած խզի արդիւնքն է եւ ոչ գիտութեան
եւ բնագանցութեան : Միտքն չէ՝ գագո՞՞ն է որ զԱստուած կ'ո-
րոշէ » Եւ այս միեւնոյն սկեպտիկանութիւնն է որ զՍտուած կ'ո-
րով կը զեղանի : Արդարեւ , Ռընանի վերջին գրութեանց մէջ
այնպիսի վսեմ բացազանչութիւնք տեսնուած են , որ մի միայն

(*) Ըստ Ռընանի մարդկութեանը երկու մասի կը բաժնուի , որ են
Les parties simples et les parties cultivées, այսինքն որքէորտ ու
ուսուցիչ :

(**) Etude d'histoire religieuse.

Ատուածոյ կ'ուզողուն եւ ապաքէն հոգւոյ եւ գրութեան ոճոյ մեծ երեւէջնորուն քիչ ընտանի եղող ընթերցողաց մեծագոյն մասը տոբուած է եղրակացնել թէ՛ Ռընան կը հաւտտայ անձնական իրականութեան, այն քնարերգականապէս պաշտուած երկնային հօր . եւ պէտք է խոստովանիլ թէ՛ այդ եղրակացութիւնն ալ շատ տրամաբանական եւ միանգամայն իրաւացի է, զի «Նշխարեան եւ Վերացման» աղօթք չլինիր : Արդ, մենք եւս , չենք կարող հանդուրժել այն թէ՛ լեզուի եւ թէ՛ իմաստի գեղեցկութեան , զոր տիւած է Ռընան հետեւեալ վերջաբանին մէջ, եւ զոր արգարեւ քննադատական դպրոցին Հայր Տէրն կրօնանք անուանել :

«Père céleste, j'ignore ce que tu nous réserves. Cette foi que tu ne nous permets pas d'effacer de nos cœurs, est-elle une consolation que tu as ménagée pour nous rendre supportable notre destinée fragile? Est-ce là une bienfaisante illusion que ta pitié a savamment combinée, ou bien un instinct profond, une révélation qui suffit à ceux qui en sont dignes! Est-ce le désespoir qui a raison, et la vérité serait-elle triste? Tu n'as pas voulu que ces doutes reçussent une claire réponse, afin que la foi au bien ne restât pas sans mérite et que la vertu ne fût pas un calcul. Une claire révélation eût assimilé l'âme noble à l'âme vulgaire; l'évidence en pareille matière eût été une atteinte à notre liberté, c'est de nos dispositions intérieures que tu as voulu faire dépendre notre foi Sois béni pour ton mystère, béni pour t'être caché, béni pour avoir réservé la pleine liberté de nos cœurs.» կարծես թէ այսպիսի կրօնական շեշտեր լսելով , շատ հեռի ենք տարակոյսէն՝ այսինքն սկեպտիկեանութենէն: Սակայն այսպէս չէ , եւ իւր Ապագայ բնական ուսմանց (Avenir des sciences naturelles) անուն երկասիրութեան մէջ, Ռընան կը պատմէ աշխարհիս զարգացումը հիւլէէն մինչեւ ի մարդ , նրկարագրելով մարդուս գիտութեամբ ընկիւք ազագայ յաղթանակներն եւ սապէս գտչելով . « Ատուած յայնժամ պիտ'ըլլայ կատարեալ , եթէ Ատուած բան հոմանիչ ընես ամբողջական էութեան . այս իմաստիւ , Ատուած պիտ'ըլլայ թերեւս այն որ չէ, նա է in fieri, այսինքն ըլլալու ճամբուն մէջ »

Սոսկալ եւ խռովիլ հարկ չէ ի լուր Ռընանական այսպիսի

յայտնութեանց , զի բոլոր իւր իմաստասիրական , պատմական , կրօնական եւ քննադատական գրութիւնք լի են հակասութեամբ , ծայրայեղութեամբ , անտեղութեամբ եւ որ աւելին է այն ըսկեպտիկանութեամբ , զոր նա ժառանգած է իւր սիրեցեալ հորմէն՝ քննադատական դպրոցի պետէն՝ Քանթ իմաստասիրէն : Ռընանի բոլոր ջանքն ու ճիգը ուրիշ բան չէ եղած բայց եթէ իւր պարզած գրութեան շնորհիւ՝ մուծանել ի բառարանս , Վօլթէրականութեան պէս , Ռընանականութեան բառն , յաւելլով այսպէս մտար վարդապետութիւն մ'ալ ի վերայ բազում մոլար եւ ստաջօղ վարդապետութեանց . սակայն չյաջողեցաւ Ռընան , վասնզի նոր չէին եւ չեն իւր սկզբունք , եւ մտքի գորութեամբ չէ որ նա կը յանդգնի լուծել գերբնական խնդիրներ՝ լողալով յար եւ հանապաղ տարակուսի եւ հակասութեանց ծովուն մէջ : Բայց Ռընանականութեան արդեօք լաւ տպաւորութիւն մը պիտի ունենար : Պատիւ չէ այդպիսի մտքի գրեթէ բոլոր կենացը մէջ մարտնչիլ ընդդէմ մարդուս ամենանուիրական բանին , այսինքն կրօնին՝ մի քանի շողորթներու ծախահարութեանց արժանանալու համար . . . այսօր ուրիշ կերպ կը հնչեն մեր լըսեղեաց Տէքարթի , Փասպալի , Ժօղէֆ որը Մէսթրի , Տը Պօնալի , Շաթօպրիանի անուններն :

Այսու հանդերձ , իւր միակ արժէքն գրութեան ոճին մէջն է , որ եւ միեւնոյն ժամանակ լաւ լեզուաղէտ եւ քաջ արեւելաղէտ մ'է :

*
**

Տեսական դիտութեանց ուսումնս նոր աւարտած եւ սասն եւ ութ տարեկան էի երբ կարդացի Ռընանի Vie de Jésus ն . չգարմացայ երբէք ընդ այն ազմուկն զոր յարուցած էր այս գիրք , վասնզի Յիսուս Քրիստոս աշխարհիս մէջ կրօնական խղճի ամենաբարձր արտայայտումն լինելով , չէ կարող դպչիլ այս աստուածային անուան , առանց թոթոնեցնելու մարդկային հոգւոյն ամենազօրաւոր , ամենազինու եւ ամենանուրբ թելերը : Բայց զրքին ազմուկէն աւելի այն որ կը զարմացնէ զմեզ , սա է թէ , այս գիրք , կարծես , ընթերցողաց մեծ մաս մը յանկարծակիի բերած է , եւ թէ անդ տեսնուած է , ըստ տարբեր տեսակէտներու , կամ յանդուրն նորութիւն մը կամ անակնկալ գայթակղութիւն մը :

Այլ ընդհակառակն , այս գիրք արդիւնք է մի մեծ պատրաստութեան , որում գրեթէ երեք քառորդ դարէ ի վեր ի Գերմանիա եւ գրեթէ կէս դարէ ի վեր ի Ֆրանսա հետամուտ կ'ըլ-

լուի , եւ որոյ պիտաւոր յատկութիւններն այս վերջնոյն մէջ եւ զան լիթրէի Սթրաուսի երկին թարգմանութիւնը (*), Միշէլ Նի- դօլայի , Ռէօսի , Ֆօլանքի հրատարակութիւններն եւ ի մասնաւորի Շէրէրի եւ Ռէվիյի ուսումնասիրութիւնքը :

Եւ ահա՛ Ռընան ասոնցմէ ներշնչեալ, արդէն 1849էն ի վեր *Liberté de penser* անուն հանդիսին մէջ *Vie de Jésus* ուրուագիրն կամ հիմերը կը դնէր : Այս գիրք Ռընանի մտաւորական կենաց բովանդակութիւնն եւ միանգամայն արտայայտունն է այդ բոլորովին մասնաւոր տալանգին, որոյ նորութիւնըն կը կայանայ գերմանական-կրօնական քննադատութեան յետին արդեանց մեկնութեան մէջ, զոր նա կը ներմուծէ ի Ֆրանսական մատենադրութեան, եւ կը յաջողի գրեթէ զայնս վարժեցնել անդ՝ մեզմայնելով եւ կորմայնելով ապահովապէս թիչ մը բան նոցա անկեղծութենէ եւ գիտական միամտութենէ :

Ռընանի աւետարաններու նկատմամբ կատարած քննութեանց առաջին եւ ամենամեծ արդեանց մին սա է թէ , Աւետարանիչք միշտ պակասոր քաղաքի (*cercle vicieux*) մ'ունեցած ըլլան , սակայն չզգար թէ ինքն է որ այդ սխալանաց մէջ կիցնայ : Չի Աւետարանիչք կ'ըսեն , «Յիսուս Դաւթի որդին էր . . . Յիսուս Բեթղէհէմ ծնած էր . . . Յիսուս ծնաւ մի կոյսէ , որ պէսպի կատարուի մարգարէութիւնը : » Իսկ Ռընան , իւր Եւաւետարանին մէջ կ'ըսէ . «Յիսուս Դաւթի որդին չէր , Յիսուս Բեթղէհէմ ծնած չէր , Յիսուս եղբայրներ եւ քոյրեր ունէր , եւ այսամենը որպէսպի մարգարէութիւնը չկատարուի : » Այսպէս , փոխանակ փիճաբանելու այն ծննդաբանութեան վրայ զոր կը ներկայեն մեզ Մատթէոս եւ Ղուկաս աւետարանիչք , հաստատելով Դաւթի սերունն մինչ յՅիսուս , Ռընան՝ առանց ո՛ր եւ է սպառնոյցի՝ զանոնք ամբողջովին չինծու կը հռչակէ , եւ այսպէս կը շարունակէ . «Որդւոյ Դաւթի տիտղոսը առաջինն եղաւ զոր Յիսուս ընդունեց հաւանօրէն՝ առանց միջամուխ լինելու անօր խորհրատանց մէջ , որով ջանացին զայն իրեն ապահովել : Դաւթի ընտանիքն , ինչ որ կ'երեւի , չիջած էր երկար ստեղծէ ի վեր . . . Ստոյգ է թէ , կը յաւելու ծանօթարանութիւն մը ,

(*) La Vie de Jésus, examen critique de son histoire (Das Leben Jesu, kritisch bearbeitet) որիէ Ռեթօպէս Ներշնչած էւ օգտուած է Ռընան :

Յիլէլ եւ Գամալիէլի պէս մի քանի բարունիք , ինքզինքնին իբր Դաւթի ցեղէն հռչակած են . . Բայց առոնց ամենն ալ շատ երկբայական զխայտութիւններ են ։ Արդարեւ , զեղեցիկ պատճառաբանութիւն եւ փաստ կարենալ ջրերու եւ տապալելու համար Աւետարանի այդ մեծ եւ աստուածազիր շէնքը ։

(Շարայարեյի)

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՈՒՆՃԵԱՆ

ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԿՇԻՌԻՔ 1891 Տարուոյ

Անցեալ տարի , Հարաւային Ամերիկայի երկիրները իրենց վրայ շատ խօսիլ տուին ։ Պրագլիւեա՝ կայսրութիւնը հասարակապետութեան հետ փոխանակեց . սեմներ ո՞ւր պիտի յանդիսայ փոխակերպութիւնը ։

Արծաթի Հատարակապետութիւնը՝ տարապայման արադութեամբ անտեղի շինութիւններ ընել ուզելով եւ գաղթականաց չափազանց մեծ թիւ մը իւր երկիրը մտցնելով պարտաւորեցաւ ի բաց թողուլ իւր երկամտական հաշուեկշիռը . եւ ահա այս սիրելի հասարակապետութիւնը , որուն անունը այնչափ քաղցրահնչիւն է , ալ արծաթ չունի ։

Կեդրոնական Ամերիկայի հինգ հասարակապետութիւնները փորձ մ'ըրին միարանելու ի մի Կեդրոնական-Ամերիկա , սակայն ամիս մը փորձ ընելէ ետքը իրարու հետ կառուցան՝ զիտնալու համար թէ՛ զլուխն ո՞վ պիտի ըլլար . անմիաբանութիւնը կատարեալ է հիմա իրենց մէջ ։

Բանամայի պարանոցին ջրանոցին վրայ չի խօսուիր այլեւս , ոչ ալ Նիքարակուայինին վրայ , զոր սակայն աւելի յոյս կար յաջողակուլու ։

Հիւսիսային Միաբանեալ-Նահանգաց մէջ զժողոհներ կան . խեղճ Սրու Հնդկիներն են որ չեն կրնար յանձնառու ըլլալ ջրնջուելու՝ եռանդոտ Նանքիներուն տեղի տալու համար : Այս Հրնդիկներն իրենց ծննդեան երկրին օրինաւոր ստացողները ըլլալով՝

յանցանք մի միայն ունին , այն է , դայն յարգելի ընկ տալու համար բաւական գօրաւոր չըլլալնին :

Ովկիանիոյ գալով , նա ամեն ժամանակէ աւելի յաղազական Ովկիանոսի ջրոց մէջ ընկղմած է . բարի՛ շարունակութիւն կը մաղթենք :

Անգղիական Աւստրալիոյ երկիրները փորձ կ'ընեն դաշնակցելու եւ դիրենք մայր հայրենեաց միացնող կապերը առաւել սերտ ընելու :

Հոլանտական Հնդիկք , ճշդիւ խօսելով , դանձային բարօրութեան մէջ չեն , եւ մայր երկրին բեռն ըլլալ կ'սպառնան :

Սպանիական Փիլիպեանք աղէկ եւ հանդիստ են , քանի որ իրենց վրայ չխօսուիր ընաւ :

Ի Նումէա իսկ , Ֆրանսացի ակամայ գաղթողք , որ անգործութիւնը այնչափ քաղցր կը գտնեն՝ այնչափ կը խնամուին կառավարութեան կողմէն , որ նախանձ կ'ազդեն իրենց ազգակցաց շատերուն , որոնք Եւրոպայի մէջ աւելի կ'աշխատին եւ շատ աւելի դժուարաւ ապրուստ կը գտնեն : Սաղազութիւնն Ովկիանիոյ :

Ասիոյ մէջ նմանապէս ամեն կողմ կատարեալ հանդարտութիւն կը տիրէ : Սիպերիա պարտի , ինչպէս միշտ , շատ ցուրտ ըլլալ , այս ձմեռ մեղի խրկած ցուրտ հովերը այս բանիս ապացոյց են : Չինացիք յամր՝ բայց յաջող կ'երթան , եւ կը մերժեն , թերեւս ըստ մասին իմաստնաբար , ճաբոնացեոց հետեւելու , որոնք զոց աչքով գահավէժ կը նետուին եւրոպական նորածնութեանց մէջ , այնչափ տարազուց՝ որչափ վարչութեան մասին , այն աստիճանի՝ որ քիչ ատենէն պիտի կորսնցնեն բոլորովին իրենց սկզբնական դրոշմը : Այս բանս տաղաուկ պիտի ըլլայ նկարագրականի սիրողաց համար :

Հնդկաստանի եւ Հնդկաչինի մէջ Անգղիական եւ Ֆրանսական Կայսրութիւնները ըստ բաւականի հանդարտ են : Եթէ քիչ մը աւելի դէպ ի հիւսիս կ'ընենք , կը գտնենք Ռուսերը , որ կ'ամբանան եւ կը գծեն իրենց անդրափական երկաթուղւոյ գծերը Թուրքաստանի աւազներուն մէջէն , Հնդկաստան եւ Չինաստան համեղու համար :

Պարսկաստան , Արաբիա եւ Ասիոյ Տաճկաստանն շատ նոր բան մը չեն ընծայեր , որով կ'ստիպուինք Եւրոպա դառնալ Վոսթորոսի վրայէն , որ քիչ ատենէն անցուղարձի շատ զիւրութիւններ պիտի ընծայէ , որովհետեւ կ'ըսուի թէ Եւրոպական եւ

Ասիական եղերքները միացնելու համար հրաշալի կամուրջ մը կառուցանելու դիտաւորութիւն կայ :

Բնական դիպուած մը , այսինքն Հոլանտիոյ Գուլլէլմոս Գ: Թագաւորին մահը, խղեց այն կապերը որ կը կապէին Ստորին Նահանգները՝ Լուքսեմպուրկի Մեծ-Դքսութեան . այս վերջինս հիմա բացարձակապէս որոշ տէրութիւն մ'է Ատուլֆ Դքսին վեհապետութեան ներքեւ, որ Նասաւի երէց ճիւղն է :

1890 տարին , Պելճիոյ մէջ միջազգային մեծ եղելութեան մը ակնատես եղաւ : Այս է հակադերեվարական դեսպանաժողովը , որ տեղի ունեցաւ Անգղիոյ զրդմամբ եւ Լէոբուտոս Բ. Թագաւորին հրաւիրանօքը , որ Քոնկոյի ազատ տէրութեան վեհապետն է : Այս ժողովը եօթնամսեայ ճիղերէ հտեւ կրցաւ միացնել 100 յօդուածներու մէջ ամբողջ հակադերեվարական օրինադիրք մը :

Քանի մը ամիս ետքը Բարիզ ժողովեալ ազատ Վեհաժողովի մը մէջ մեծ Կարղինալն Լալիժրի , որ սեւերուն ազատութեան համար եղած դաշնաւորութեան առաջին զրդիչն է , ինքզինքը գոհ հրատարակեց Պրիւսէլի դեսպանաժողովին ընդհանուր գործքէն , որ Եւրոպական տէրութեանց մարդասիրական նպատակաւ համաձայնութեանը յիսուի անյուսալի մէկ արդիւնքն էր :

Ափրիկէ . — Սպասելով որ Ափրիկեան դաշնակցութիւնը սկսի իւր պտուղները տալ , յարմար պիտի ըլլար քննել թէ այս Եւրոպական 8 տէրութեանց ամեն մէկուն , այսինքն Տաճկաստանի , Անգղիոյ , Ֆրանսայի , Գերմանիոյ , Իտալիոյ , Սպանիոյ , Բորթուկալի , Պելճիոյ եւ Ամերիկեան երկրին մէջ ազդեցութեան բնչ մաս ինկած է : Այս քննութիւնը զիւրացնելու համար երկու վիճակագրական պատկերներ պիտի տանք, զորս իւրաքանչիւր ոք պիտի կրնայ հեշտիւ մեկնել :

Գալով Սահարայի , Ֆրանսացի գնդեր դեռ անոր եղերքը միայն կը բռնեն , մինչդեռ բուն Սահարա իւր անհուն տարածութեամբ Նիկեր գետին եւ Չատ լճին մօտերը նշմարեալ իսկ չէ բնաւ Ֆրանսացի ճամբորդէ մը . այս վերապահեալ է միայն Ֆրանսայի ապազայ ներգործութեանը իբր ազդեցութեան սահմանավայր մը , գլխաւորապէս Անգղիոյ հետ կնքեալ դաշինքով մը , մինչդեռ Անգղիա իրեն կը վերապահէ Չատ լճին հարաւամին կողմը ազդեցութեան սահմանավայր մը :

Ընթերցողք զդոյշ պէտք է ըլլան հաւատալու որ հետեւեալ

ցուցակներուն մէջ զրուած երկիրներուն ամեն մէկը ճշդիւ ճանչցուած , սահմանագծուած եւ չափուած ըլլայ : Անստուգութիւնը ալ աւելի մեծ է բնակչաց թուոյն վրայօք : Առանօք Ափրիկէի 80 միլիոն բնակիչ հազիւ կը տրուէր , այսօր ոմանք կուզեն անոր 200 միլիոնէն աւելի բնակիչ վերազրել . բայց կրք Եւրոպական տէրութեանց՝ իրենց յատկացուցած երկիրներուն բնակչաց զուամարը ի մի ժողովն , հազիւ կը հասնի 140-150 միլիոնի . եւ լաւ եւս է նուազը ընդունիլ քան աւելին :

Ահաշարիկ մեր ցոշցակները

ՖՐԱՆՍԱ	մակերես.	ժողովուրդ
Սահարա . ազբեցոմեան սահմանաժայր	3,000,000	1,000,000
Սենեկալ , սրացոսած+	200,000	500,000
Քօթ ա'իլուաւ , սրացոսած+	50,000	50,000
Քոնկոյ , սրացոսած+	800,000	6,000,000
Մատակաւար , պաշտպանութեան .	600,000	4,000,000
Ռէիւնիօն եւ Քոմորիանք	4,600	215,000
Օպօք , սրացոսած+	50,000	20,000
Գումար	4,704,600	11,785,000
ԱՆԳՂԻԱ		
Կամպիա , սրացոսած+	5,000	50,000
Սիէրրա Լէօնէ , ֆաղնականութեան .	50,000	200,000
Քօթ ա'Օր եւ Աչանդի	100,000	1,500,000
Լակոս , սրացոսած+ եւ կեդրոնական	1,000,000	12,000,000
Սուրբ Հեղինէ եւ Համբարձումն .	300	6,000
Վալֆիլ-Պէ	1,200	2,000
Գլուխ Բարեյ . եւ Նաթալ . ֆաղն .	1,000,000	2,000,000
Զամպէզի եւ Նիատալանտ . ազբեց .	1,000,000	3,000,000
Մօրիս կղզին , ֆաղնականութեան .	2,000	350,000
Զանդիպար եւ Բեմպա կղզիք . .	2,000	200,000
Վիքթօրեա Լարտ եւ Ուկանտա , ազբեցոմեան սահմանաժայր . . .	1,000,000	6,000,000
Պերպերիա եւ Սոքոթորա	100,000	100,000
Գումար	4,260,500	25,408,000

ԳԵՐՄԱՆԻԱ	Մակերես.	Ճաղովուրդ
Թոկոլանտ , սրացուածք և ազրեց.	60,000	300,000
Քամրօն :	500,000	3,000,000
Հոթենիթացիք	1,000,000	1,500,000
Ջանկեպար	1,200,000	3,000,000
Գումար	2,760,000	7,800,000

ՊԵԼՃԻԱ

Քոնկո աչար տէրու-նիւն Լեօթօլտ Բ. քաղաքոր	2,200,000	20,000,000
--	-----------	------------

ԲՈՐԹՈՒԿԱԼ

Ատորեան, Մատէյրա և Գարվէր-տեան կղզիք. Գաղթականն-նիւն	4,500	500,000
Կոլինէա . սրացուածք	30,000	100,000
Անկոլա , սրացուածք, և Բարձր		
Ջամպեղ, ազրեցու-նիւն	1,400,000	6,000,000
Մոլլամպիք , սրացուածք	800,000	3,000,000
Գումար	2,234,500	9,600,000

ԻՏԱԼԻԱ

Էրիթրէ, (կարմիր ծովուն վրայ).	50,000	100,000
Ապիսինեա , պաշարանն-նիւն	800,000	4,000,000
Սօմալ , ազրեցու-նիւն սահման	400,000	1,000,000
Գումար	1,250,000	5,100,000

ՍՊԱՆԻԱ

Բրէսիտ. Մարօքական. սրացուածք	25	20,000
Քանարեան կղզիք. Գաղթականն-նիւն.	7,000	300,000
Սահարայի եղերքը. ազրեցու-նիւն.	500,000	100,000
Ֆէրնանտօ-Նո կղզիք. սրացուածք.	3,000	30,000
Քորսիքօ և Մանիլ, (է Կրաստ).	50,000	50,000
Գումար	560,025	500,000

ԱԶԱՏ ՏԵՐՈՒԹԻՒՆՔ	մակերես .	ժողովուրդ .
Մարոք , Կայսրութիւն	500,000	4,000,000
Լիպերիա. հասարակապետութիւն	100,000	1,000,000
Օրանժ . հասարակապետութիւն .	150,000	200,000
Թրանսվալ « « « .	300,000	800,000
ՀԵՏԵՒԱԲԱՐ		
Եւրոպական ստացուածք	18,469,625	84,193,000
Ճանչուած ազատ տերութիւնք .	550,000	2,000,000
Մնաւոր երկիրներ :	6,000,000	30,000,000
Համադասար Ափրիկէի համար	25,019,625	116,193,000

Ինչպէս կը տեսնուի , Անգղիա եւ Ֆրանսա այս Ափրիկեան կարկանդակին բաժանմանը մէջ առիւծին մասը առած են . եւ սակայն Ֆրանսացիք իրենց պահանջմանց ծայրը հառած չեն հիւսիսային կողման համար, ուր վեց միլիոն հազարամեթր տեղ կայ բաժնուելիք զրացեաց մէջ: Սակայն Ափրիկեան ստացուածքները չեն միայն որ կը գրգռեն մեր շահը . անոր համար կը դնենք երկրորդ ցուցակ մը , որ ցուցնէ Եւրոպական տերութեանց աշխարհիս 5 մասանց մէջ ունեցած ստացուածքները : Եւրոպիոյ զաղթական տերութեանց պիտի յաւելունք քանի մը արտաքին մեծ տերութիւններ, ինչպէս Ամերիկայի Միաբանեալ-Նահանգները, Չինաստան եւն .

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿ

ԵՐԿՐԱԳՆՏԻՍ ԳԼԽԱՒՈՐ ՏԵՐՈՒԹԵԱՆՑ

1891թ

ՏԵՐՈՒԹԻՒՆՔ	մակերես .	ժողովուրդ
Անգղիա . ունի	315,000	38,000,000
Ասիոյ մէջ «	4,200,000	270,000,000
Ափրիկէի մէջ «	6,000,000	37,000,000
Ամերիկայի մէջ «	9,500,000	6,000,000
Ովկիանիոյ մէջ «	8,500,000	4,500,000
Գոմար	28,515,000	355,500,000

ՏԵՐՈՒԹԻՒՆՔ	մակերես.	ժողովուրդ
Ֆրանսա ունի	530,000	38,500,000
Ասիոյ մէջ «	500,000	17,000,000
Ափրիկէի մէջ «	7,400,000	24,000,000
Ամերիկայի մէջ «	120,000	360,000
Ովկիանիոյ մէջ «	30,000	90,000
Գումար	8,580,000	79,950,000
Ռուսաստան ունի	5,500,000	83,000,000
Ասիոյ մէջ «	16,500,000	17,000,000
Գումար	22,000,000	100,000,000
Գերմանիա ունի.	540,000	48,500,000
Ափրիկէի մէջ «	2,760,000	7,800,000
Ովկիանիոյ մէջ «	300,000	500,000
Գումար	3,600,000	56,800,000
Աւստրիա-Հունգարիա ունի .	675,000	42,000,000
Իտալիա ունի	287,000	30,500,000
Ափրիկէի մէջ «	1,220,000	4,600,000
Գումար	2,182,000	77,100,000
Եւրոպ. Տաճկաստան ունի .	300,000	8,000,000
Ասիոյ մէջ « « « .	2,000,000	17,000,000
Ափրիկէի մէջ « « « .	2,000,000	8,000,000
Գումար	4,300,000	33,000,000
Սպանիա ունի	500,000	17,500,000
Ափրիկէի մէջ «	660,000	500,000
Ամերիկայի մէջ «	130,000	2,500,000
Ովկիանիոյ մէջ «	200,000	6,000,000
Գումար	1,490,000	26,500,000

ՏԵՐՈՒԹԻՒՆՔ	մակերես	ժողովուրդ
Փորժուկալ ունի	90,000	4,500,000
Ասիոյ մէջ «	3,700	520,000
Ափրիկէի մէջ «	2,200,000	9,600,000
Ուկրանիոյ մէջ «	120,000	125,000
Գումար	2,413,700	14,745,000
Հոլանտա ունի	133,000	4,500,000
Ուկրանիոյ մէջ «	2,000,000	28,000,000
Ամերիկայի մէջ «	120,000	125,000
Գումար	2,253,000	32,625,000
Պեւճիա ունի	30,000	6,000,000
Քոնկոյի տէրութիւն	2,200,000	20,000,000
Գումար	2,230,000	26,000,000
Շուէտ-Նորվեգիա	762,000	6,800,000
Զուիցերի	41,000	3,000,000
ԵՒՐՈՊԱՅԷ ԴՈՒՐՍ		
Միացեալ-Նահանգք	9,500,000	63,000,000
Քանադա	9,000,000	5,000,000
Պրազիլեա	8,000,000	14,000,000
Աւստրալասիա	8,000,000	4,000,000
Կայսրութիւն Հնդկաց	4,000,000	270,000,000
Կայսրութիւն Չինաց , , ,	12,000,000	400,000,000
Ճաբոն , , , , , , ,	400,000	38,000,000
Արծաթի Հատարակապտութ ,	2,800,000	4,500,000
Մեքսիկոյ , , , , , ,	1,900,000	12,000,000
Գումար ամբողջ Երկրագնդի համար	17,100,000	454,500,000

Այս թիւերը կը յանձնենք հիմա մեր ընթերցողաց նկատուութեանը , մենք միայն մէկ խորհրդածութիւն մը պիտի ընենք :

Աշխարհիս այս 23 մեծ տերութեանց ցուցակին մէջ երկուքը այսինքն Չինաստանն եւ Ճաբոնն Եւրոպական սպիտակ ցեղին չեն վերաբերիր :

Ասկից զատ , ի բաց առեալ Տաճկաստանը , որ Իսլամու-
թիւնը կը դաւանի , եւ Չինաստան եւ Ճաբոն որ կուսպաշտ են ,
լոյրը միւսերը քրիստոնեայ են , թէպէտեւ շատերը , ինչպէս
Հնդկաստան կը պարունակեն դեռ բազմաթիւ կուսպաշտներ եւ
մահմետականներ . բայց կրնայ ըտեւիլ որ աշխարհիս վրայ հա-
զար միլիոն մարդիկ քրիստոնեայ են :

Ուստի յայտնի կը տեսնուի որ սմանց պնդածին հակառակ
Քրիստոնէութիւնը ջնջուելէ դեռ շատ հեռու է :

ԱՆՏՈՆ ԹՕՓՃԵԱՆ

ՄԱՐՄՆԱՄԱՐՁ

Ի ՊԷՏՍ ԱՄԵՆԵՑՈՒՆ

Շարայարուրիւն (*)

ՎԵՑԵՐՈՐԳ ԿՐԹԱՆՔ

Ուսերու յաջորդական բարձրացում

1. Ուսերդ յաջորդաբար եւ ուժով բարձրացուր՝ կարելի
եղածին չափ . 2. Տակաւ առ տակաւ իջեցուր :
- Կրկնէ 30 , 40 , 50 անգամ :

ԵՕԹՆԵՐՈՐԳ ԿՐԹԱՆՔ

Ուսերու բարձրացում

1. Ուսերդ ի միասին բարձրացուր ուժով եւ կարելի ե-
ղածին չափ վեր : 2. Տակաւ առ տակաւ իջեցուր :
- Կրկնէ 5 , 10 , 15 անգամ :

(*) Տես Պատկեր Ա. Տարէ, էջ 576

ՈՒԹԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Թիւրումն իրանի

1. Մարմնոյդ վերի մասը ծռէ՝ աջ կողմը՝ ստորին մասը
անշարժ բռնելով։ 2. Վեր վերձուր եւ ձախ կողմը կատարէ
նոյնը՝ առանց իւրաքանչիւր շարժումէն յետոյ կենալու։
Կրկնէ 6, 8, 10 անգամ։

ԻՆՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Թիւրումն մարմնոյ

1. Մարմինդ առաջ ծռէ՝ ծունկերդ անշարժ բռնելով։ 2.
Վեր վերցուր եւ ետ ծռէ՝
Կրկնէ 6, 8, 10 անգամ։

ՏԱՍՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ

Բարձրացում բազկաց

1. Ձեռքդ փակ եւ փթամատդ ներսի կողմ դարձած բըռ-
նելով իւրաքանչիւր ծիծիւ վրայ դիր։ 2. ուժով վեր նետէ։ 3.
յետոյ առաջին դիրքին բեր դարձեալ։
Կրկնէ 6, 8, 10 անգամ։

ՄԵՏԱՍԱՆԵՐՈՐԴ ԿՐԹԱՆՔ


Ձգտում բազկաց

1. Նախորդ կրթանց համար պատուիրեալ եղանակաւ կը-
ռուփներդ դիր։ 2. յառաջկոյս նետէ զայնս՝ բազուկներդ զու-
գահեռական դիրքի մէջ բռնելով։ 3. յետոյ առաջին դիրքին բեր
դարձեալ։

Կրկնէ 6, 8, 10 անգամ։

Շարայարեյի

ՅՈՎԷ. Վ. ԱՃԷՍԵԱՆ



ՊԱՏԿԵՐ տասն է. հինգ օրը մի անգամ կը հրատարակուի:

Բաժանորդագրութեան տարեկան գինն է
Կ. Պօլտոյ համար 40 դանեկան
Գաւառաց է. օտար երկիրներու համար
քղրատարի ծախսն ի միասին հաշուելով 50 « «

Խորաքանցիչը թիւ 2 դասեկանս

ՊԱՏԿԵՐի խմբագրատունն է ի Բերա, Եեշիլ փողոց
Թիւ 1, ուր պետք է դիմել բաժանորդագրութեան է. քերթին
վերաբերեալ այլ ամենայն խնդրոց համար :

RÉDACTION DU **BADGUERE**

Constantinople, Péra, rue YÉCHIL N ° 1

معرف نظارت جلیله سنک رخصتیه طبع اولتمشدر